

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյալին խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННЫЙ,

подъ председательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича,

ОСОБЫЙ КОМИТЕТЪ.

Денежныя пожертвованія, предоставляемыя въ распоряженіе состоящаго подъ председательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича Особого Комитета для помощи нуждающимся въ мѣстностяхъ, постигнутыхъ неурожаемъ, а также заявленія о желаніи жертвовать въ пользу нуждающихся хлѣбомъ (зерномъ и мукою) принимаются въ помѣщеніи Кабинета Его Императорскаго Величества, у Аничкова моста, отъ 10 час. утра до 2 час. дня, ежедневно, за исключеніемъ дней неприсутственныхъ. Пожертвованія отъ иногороднихъ слѣдуетъ адресовать: въ С.-Петербургѣ, въ Высочайше утвержденный подъ председательствомъ Его Императорскаго Высочества Наслѣдника Цесаревича Особый Комитетъ.

2—3



ԲԱՐՁՐԱՎՈՅՆ ԹՈՅԱՆՈՒՄԻՆ, 1891 ԹԻՒ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԲԱՐՆԳՈՐԾԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՆՈՒՄԸ.
ՅՕԳՈՒՑ 1891 ԹԻՒ ԱՆՊՏՅԱՆԲԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱՆ ԱՅԳԱՐԵԱԿՈՒԹԱՆՈՒՄԸ.

Այդ վիճակաւոր արդիւնքը, Նորին Կայսերական Մեծութեան Կարգադրութեամբ, կը յառաջացի բարեգործական հաստատութիւններէ միջոցով Ռուսաստանի տաղանքներին:

Տոմսերի տարածվելը տեղի կունենայ 1891 թվի նոյեմբերի 18-ին կայացած՝ Բարձրագոյն հաւանութիւն գտած կանոններէ համաձայն:

Բայց կը թողնուի ընդամենը 1,200,000 տոմսակ սերիաներով, իւրաքանչիւրում 100-ական տոմսակ, ընդամենը 12,000 սերիա № 1-ից մինչև № 12,000:

Իւրաքանչիւր տոմսակ բաժանված է հինգ կուպոններով: Իւրաքանչիւր տոմսակն արժէ 5 ռուբլի, իւրաքանչիւր կուպոնը արժէ 1 ռուբլի: Ով որ տանէ տոմսակը, նա կը ստանայ ամբողջ գումարը՝ զուտ: Իսկ որ եւ տոմսակին պատկանող կուպոն տանողը՝ կը ստանայ տարած գումարի 1/5 մասը:

Տանող տոմսերի թիւն է 2,928, իսկ ամբողջ տանելի գումարները՝ 1,200,000 ռուբլի, այսպէս՝

1 տոմսակ	100,000 ռ.	100,000 ռ.
1 >	50,000 >	50,000 >
1 >	25,000 >	25,000 >
10 >	10,000 >	100,000 >
15 >	5,000 >	75,000 >
100 >	1,000 >	100,000 >
200 >	500 >	100,000 >
2,600 >	250 >	650,000 >

Գումարը . . . 2,928 տանող տոմսակ, ընդամենը . 1,200,000 ռուբլի:

Խաղարկութեան ժամանակամիջոցը կը յայտարարվի իր ժամանակին:

Տոմսակները և առանձին կուպոնները վաճառելը տեղի կունենայ պետական բանկում, նրա գրասենեակներում և բաժիններում, բանկի խնայողական կասսայի բաժիններում, Պետերբուրգում և Մոսկվայում, պատահականաբար և Կարմիր խաչի վարչութիւններում, երկաթուղիների կայարաններէ կատարներում, մասնաւոր բանկներում և բանկային գրասենեակներում և այլն:

Թէ երբ կը սկսվի տոմսերի վաճառումը իւրաքանչիւր քաղաքում՝ այդ մասին կը յայտարարվի առանձին, թիւերով այն տեղերը, ուր տեղի կունենայ այդ վաճառումը:

Պետերբուրգ, 1891 նոյեմբեր.

Բարեգործական վիճակաւոր մասնաժողով.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի առաջարկութիւն. Նամակ Ալեքսանդրօպօլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էֆէնդիների քաջագործութիւններ. Բաղրաբայի և Ֆրանսիայի ընդհարումը. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Արտաքին լուրեր.—Հեռագրի ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՏԵԼԵԿԱՆՈՒՄ.—ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵԻՆԵՐՈՒՄՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Մանկական ընթերցանութեան համար մատչելի միակ ամսագիրը «Աղբիւրն» է, որի տասնամյայ քիչանը շուտով լրանալու է: Մի կողմ թողնելով նա մէջ պարունակած յօդուածների որքան մասնակցներն մատչելի լինելու հարցը, թողնելով այն, թէ նա իր բովանդակութեամբ հետզհետէ փոխանակ է, թէ յետ է գնում, «Աղբիւրն» յարգելի խմբագրութեան ուշադրութիւնը հրաւիրում ենք հետեւեալ առաջարկութեան վրա:

Մանկական պատկերազարդ ամսագիրը իր յօդուածներով և առասարակ տուած նկարներով պիտի մատչելի լինի մանկական զարգացման ու

հասակին: «Աղբիւրն» կարգում են զպոք յաճախող, կամ տանը դաստիարակող մանուկները, ուրեմն այդ ամսագիրը ամբողջովին նուիրւած պիտի լինի նրանց: «Աղբիւրն» տարեկան տալիս է մի, կամ մի քանի պրեմիաներ, որոնք երբեմն կարող են դաշխի զարդ լինել, ինչպէս ինքն և ասում: Ընդունելով, որ այդ ճշմարիտ է, բայց արդեօք մանուկը այդ պրեմիաներից որքան կօգտվի:

Այն նկարները, որոնք երբեմն մեծ գլերով ուղարկվում են բաժանորդներին, պիտի նրանց հոգուն համաձայն և բարձր ու վարքը կրթող, ազնւացող լինեն. ուրեմն այդ պրեմիաների բարոյականութեան պարտութիւնը պիտի գրված լինի ամսագրի մէջ և բարձր չը պիտի լինի երեխաների մտաւոր հորիզոնից: Նկարը պիտի լինի կարգաւոր յօդուածի իմաստը դիտողականապէս իւրացնելու առաջնորդը: Ուրեմն մանկական ամսագրի պրեմիաները պիտի մատչելի լինեն ընթերցողների կրթութեանը:

Երկրորդ՝ ամենքին յայտնի է, որ մեր ծխական դպրոցները, Թիֆլիսի հարուստ դպրոցներն անգամ, զուրկ են դիտողական ուսման համար նկարներից: Դիցուե ուսուցիչը դասադրել յօդուածից նիւթ առնելով պատմում է երկրագործութեան մասին, բացատրում է ցորեն կասելը,

կամնելը և այլն (մանաւանդ այն տեղերում, ուր դրանց մասին հասկացողութիւն չունեն), կամ նկարագրում է թէ գիւղացին ինչպէս է վարում հողը. այս բոլորն ասում, պատմում է բերանացի, վերացական կերպով: Որքան էլ ուսուցիչը վաւերականութիւն օժենայ և կարողանայ իր երեւակայածը արտայայտել պարզ, որոշ, այնու ամենայն նկարագրելուց յետոյ, նա ձեռքբեր ծաւաւ, յուսահատ, խղճահարկած նայում է այն անմուգ, քնքշալ աչքերին, որոնք իմաստալից հայեացքով դիտում են իր վրա, իր դէմքում տեսնելու այն պատկերները, որ ուսուցիչը պատմելով նկարագրել է. բայց իդուր մանուկն իր թոյլ երեւակայութեամբ ուղում է պատկերացնել... մինչդեռ եթէ պատկեր լինէր, եթէ դպրոցն օժենար այդպիսի տեսարան, ուսուցիչն առանց ժամկէտաւ լինելու ցոյց կը տար և, երբնայի մտքի մէջ պատկերը կը տպւորվէր իր բոլոր մանրամասնութիւններով: «Ամենամանուկն» նկարած պատկերը, ասում են յայտնի մանկավարժներ, շատ բան կարող է հասկացնել մանկան, քան ուսուցիչի պրեմիան լեզուն:

Թիֆլիսի մի հարուստ դպրոցում մենք տեսանք նկարներ դիտողական ուսման համար, ուր ներկայացրած էին ուսական քաղաքային ընտանիք, գիւղական կեանքից, երկիր փոցիկը, ցորեն ծնունդը (գաւազաններով), մայականի տուն իր բնակիչներով ու սարք ու կարգով, որոնք միանգամայն հայ երեխային անձնօթ են: Եթէ լեզուի ուսուցիչը ուղենայ նրանց գործ ամէլ, ինչ ասէ մանուկներին. ասէ այս նկարը դուք տեսէք, բայց երեւակայեցէ՛ք դրանց հակապատկեր մեր ընտանեկան նիստ ու կացը.—այդ անկարելի է: Մինչդեռ կարելի էր և այդ շատ հեշտ է «Աղբիւրն» համար հայկական կեանքից տեսարաններ նկարել և տալ մատուց բաժանորդներին և դպրոցներին, որոնք պէտք է ասել, մեծ մասամբ բաժանորդ են նրան: Որինակ, որքան հրաշալի տեսարան կը լինէր դիտողական ուսման համար, եթէ «Աղբիւրն» ամսագիրը ընթերցողներին մի այսպիսի պրեմիա տար. Սեանի լիճը, նրա մէջ համանուն կղզին, ափին Չիբուխու գիւղը, ուր մի կողմում գիւղացին հասած հակերը հնձում է, նրա կին ու աղջիկը հաւաքում, խորձ են կապում, միւս կողմում փռած է կալը և գիւղացու 6—7 տարեկան երեխան կամի իրա կանգնած, գոմէշ պոչից բռնած քնում է, հեռու ջրի ափին երեւում է ջրաղացը, իսկ լճի վրա նաւակը բեռնաւորված գիւղական արդիւնաբերութեամբ՝ հեռանում է ափից: Այսպիսի մի տեսարանը կարող է և դաշխի՛ն զարդ լինել, և զպրոցում ծառայել դիտողական ուսման համար:

Կամ վնտ պրեմիա կը լինի «Աղբիւրն» բաժանորդներին համար Արարատեան դաշտի մի տեսարան, ուր գիւղացի տղան ընկած եղան կամ գոմէշի մէջքին՝ արածեցնում է նախիրը. նրա մօտակայ հանդում գիւղացին իր արան է ջրում, միւս կողմում երևում է գետ կանաչ բամբակի արտը, ուր մի քանի մարգաւոր կանայք ու աղջիկք թափու ջակով քաղհանում են (աւելորդ խոտերը դուրս են տալիս)... Այս տեսարանին էֆֆէկտ կարող է տալ հարաւարեւելքում ձիւնապատ Մասիսը: Այսպիսի տեսարանները որքան նիւթ կարող են մատակարարել ուսուցչին դիտողականապէս մանուկներին զարգացնելու... Հաջարաւոր այսպիսի պատկերների վրա կարող ենք մասնացոյց անել, որոնք իրանց ընտիր տեսարաններով, կրթիչ բնաւորութեամբ կարող են գերազանցել «Աղբիւրն» բոլոր պրեմիաներին:

Վերջացնելով մեր խօսքը հրաւիրում ենք «Աղբիւրն» խմբագրութեան ուշադրութիւնը այս հարցի վրա: Մենք կարծում ենք, որ նրա համար այդ առաջարկութիւնը նոյնքան սրտին մօտ է, որքան նրա բոլոր բաժանորդներին, մանաւանդ հայոց դպրոցներին: Եւ հեշտ է իրագործելի:

Ուսուցիչ

ՆԱՄԱԿ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒԹՅՈՒՆՑ

Գեղտեմբերի 9-ին

Մեզանում կան թերթեր, որոնք դարձրելիս թէն չեն թողնում ոչ մի դատարկութիւն հայերազական ասպարիզում, բայց իրանց գոյութեան ամբողջ ընթացքում խուսափելով կրիտիկական ուղղութիւնից և մեր հասարակական հաստատութիւնների անթիւ պակասութիւններն ու նրանցում կատարված գեղձումները անաչառութեամբ մերկացնելով համարելով անպատասաւոր, իրանց խիստ պահպանողական կամ անորոշ ուղղութեամբ, աշդում են պատրաստել մեր հասարակական գործող շրջաններում «ինքնաբաւականներին», կամ աւելի լաւ է ասել՝ «ինքնախաբաններին» յայտնի դասակարգը, որը միշտ և ամէն տեղ անհաշտ թշնամի է հանդիսանում մամուլի զննադատ ոգուն: «Աղբում են քանդել... ուղում են սպանել բարի գործը...» ամէն անգամ աղաղակում են նրանք, երբ առողջամիտ լրագրութիւնը սկսում է շօշափել մի որ և իցէ փողովրդական հիմնարկութեան թերութիւնները կամ հասարակական գործողի գեղձումները:

«Տեղացին» ծագում է Ալեքսանդրօպօլի «Թատրոնական կոմիտե» բառերը, ծագում է լուսնուղ շինող լրատուին, որը մի քանի թատերասերներ ընտրութեամբ, որոնց նպատակն է կազմակերպել մի խումբ՝ շարունակ ներկայացումներ տալու, այդքան մեծ նշանակութիւն է տալիս, որը հնարաւոր է համարում մեզանում մի այդպիսի կոմիտեի գոյութիւնը, ուր չէ զգացվում ներկայացումների առանձին կարիք, այլ կատարեալ անտարբերութիւն դէպի այդ ներկայացումները, — և անա նրան բեմական գործը իր խանձարութիւն մէջ խեղդող են համարում:

Գուցէ ոչ քիչ այնքան յայտնի չէ, որքան պ. Թղթակցին, որ «Տեղացին» քսան տարիների ընթացքում մասնակից է եղել սիրողների գործունէութեանը, կրել է նրանց հետ բեմական գործի ամբողջ ծանրութիւնը, ծառայել է միշտ և այժմ էլ ծառայում է տեղական բեմին առանց հացկատակութեան և այդ բոլորից յետոյ դուրս գալ չէ ասել թէ՛ «Տեղացին» կամնում է խեղդել թատրոնական գործը իր խանձարութիւն մէջ, — դա վերին աստիճանի անբարեխղճութիւն է թղթակցի կողմից:

«Տեղացին» ծագում է Ալեքսանդրօպօլի «Գլըքերի հրատարակչական ընկերութիւն» մեծահնչուն բառերը, ծագում է լուսնուղ շինող լրատուին, որը հաւանական է գտնում Ալեքսանդրօպօլում մի այդպիսի ընկերութեան իրագործումը, ուր ընթերցանութեան կարիքը վերջին տեղն է բռնում, — և անա նրան համարում են անտեղեակ գործի էությունը:

Ընտրել թատերասերներից մի քանիսին, որ աշխատեն կազմակերպել սիրողների մշտական խումբ այդ բառի ամենանշող մտքով, չէ նշանակում «Թատրոնական կոմիտե» անդամներ ընտրել: Աշդեցնել թարգմանելու և հրատարակելու նոյն իսկ մի կամ երկու մանկական գրքոյներն չէ նշանակում գրքերի հրատարակչական ընկերութիւն հիմնել, ըստ որում ամէն մի ընկերութիւն իրաւունք ունի գոյութեան անուն կրել միայն իր օրինաւոր կազմակերպութեամբ և գործունէութեամբ:

Տեղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, 22-ին գեղտեմբերի լինելու է Թիֆլիսի ՄԱՍԿԻՆ անգամ հայոց օպերայի փորձը. մեր երգչուհիներ օր. օր. Գլեմեան և Ալվադեան, երգիչներ՝ Մադաթեան և Եղիազարեան, տալու են յրաժշտական կրթական (Արշակունու տանը), «Ֆաուստ» օպերայից երկու գործողութիւն հայերէն լեզուով: Յոյս ունենք որ մեր հասարակութիւնը կը հետաքրքրվի այդ ներկայացու-

ը տարի պատկլած է և ունի իր կնոջից մի
ուսակ։ Բայց կարծում եք թէ իշխանը Հեղինէին
զել է, որպէս զի նրա օժիտով, նրա փողով
դռնէ իր խախտւած նիւթական դրութիւնը—որ,
սամոնասցել է հարուստ աղջկայ հետ միմիայն
հա համար, որ աւելի միջոց ունենայ լէճֆ անկը
բունէններ պահել, թողով իտաղլ և այլն։ Ա-
ւանանաւով, նա իր կնոջ բերել է իր ընտա-
նը, որը բաղկացած է իր մօրից ու իր քրոջի-
ցի իշխանուհի Մարիամը (Միքայէլի մայրը) և
սամոնի օրիորդ Ուգա (Միքայէլի քոյրը), եր-
ան էլ ամենամաքիրտան, հակակրկի և զգույնի
նաչը են։ Դրանք, չը գիտենք ինչու, աւելի
ուսում են Հեղինէին, թէ և բոլորն էլ նրա փողով
ապրում։ Եւ ահա այդ շրջանում անցնում
է դժբաղդ օրերը իշխանուհի դարձած վաշխա-
ւի աղջկի Հեղինէն, ահա արդէն երեք տարի-
մը րաջվկուռն պէս նա դուրս է գալիս հանդի-
կանների առջև ձեռքերը կրծքի վրայ խաչած,
ուր դէմքով, ախ ու վախ քաշելով, նա արդէն
բաղդ է բեմը րաջվկուռն պէս և նրա միակ
իթարութիւնն է՝ իր միակ դաւալը՝ Բայց
սու ամենայնիւ նա սիրում է Միքայէլին (այսու-
չէ ինչի համար) թէ և զիտէ որ նա վառնում
է փողերը և չուստով այլ ևս ոչինչ չի մնայ
հարստութիւնից։ Այնուհետև, ամբողջ չորս
ածողութիւնները, չարուսակվում է նոյն տղադ
անըր, քանի զնում է մարդը աւելի անտառակ
ուսում, աւելի էլ վառնում է փողերը սիրու-
մերի ու թղթախաղի վրա, կինը աւելի էլ
բաղդ է դառնում, ընտանեկան կեանքը դա-
ւում է մի դժբաղդ, Հեղինէն հեռանում է իր դա-

ԹԻՖԼԻՍ համուսն է 12 > 25 > ցերեկ.
ԹԻՖԼԻՍի մեկնում է 1 > 20 > ցերեկ.
ԲԱՐՈՒՄ համուսն է 7 > 30 > առաւ.

№ 4

ԲԱՐՈՒՄի մեկնում է 11 ժ. 10 ր. գիշեր.
ԹԻՖԼԻՍ համուսն է 5 > 50 > ցերեկ.
ԹԻՖԼԻՍի մեկնում է 6 > 50 > ցերեկ.
ԲԱՐՈՒՄ համուսն է 8 > 15 > առաւ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍի մեկնում է 9 ժ. 20 ր. ցերեկ.
ԳԱՆԶԱԿ համուսն է 10 > 10 > առաւ.
ԳԱՆԶԱԿի մեկնում է 7 > 35 > ցերեկ.

ԹԻՖԼԻՍ համուսն է 7 > 30 > առաւ.

ՌՈՒՍԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐ

ՀԻՆԳՇԱՐԹԻ, 8 ժամին Երեկոյեան, շրջական
բնակարան Բաթումից դէպի Օդեսա.

ԵՐԵԿՈՅԵԱՆ, 4 ժամին Երեկոյեան նմանապէս:

ԵՐԵԿՈՅԵԱՆ, 7 ժամին Երեկոյեան, Բաթումից
դէպի Կ. Պոլիս:

Խմբագիր-հրատարակող Գրիգոր ԱՐԾՐՈՒՆԻ

Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր



ՏՕՆԱԾԱՌԵՐԻ Համար

ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱԳԱՅԻՆ Վ. ԳՐԻՎՆԱԿԻ

Ստացաւ ահազին ընտրութիւն ԸՆԾԱՆԵՐԻ, ԶԱՐԳԵՐԻ և
ամեն ինչ որ հարկաւոր է շքեղ և էփան ՏՕՆԱԾԱՌԵՐ տարբեր
Համար: Պ.պ. օտարազարդացիների համար կան մանրամասն
ՍԱՐԳ և ԿԱՐԳ մեծ և փոքր տոնածառերի համար, 5 բուր-
լուց մինչև 150 բուրլի արժողութեամբ, պատրաստ ուղարկե-
լու համար: Կայ անային բնագործան կրակի նոյնպէս կան պար-
տաւ համար: Վայ անային բնագործան կրակի նոյնպէս կան պար-
տաւ համար: 1—10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ֆրանսերէնից հայերէն թարգմանված թօթ. օրնէի **ԴՕԿՏՈՐ**
ՌԱՄՕ հեղինակութիւնը, մեծագիր 375 էջ: Գինը 80 կ: Թիֆլիսում փաճառվում է
Կենտրոնական գրափաճառանոցում, Բազում՝ Եղբայրների Բեկարեանցի մագաղանում: Դու-
շում՝ Արախանի գրափաճառանոցում և Գարիկանի մագաղանում: Ուրիշ քաղաքներից
գիմել թարգմանչին. ԵՄ Պուշու, Невеѣѣ ХАНДАМИРОВА. Գինը 1 ր:

1—6

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՍՍ մէջ **ԵՐԵԿՈՅԵԱՆ** ըն-
դունում է բոլոր հայ և ռուս լեզուների համար բաժնորդագրութիւն եկող 1892 թ.
Համար՝ խմբագրական գնորդի կարելի է ինձ մօտ տեսնել այդ լեզու բոլոր հրատարա-
կութիւնների պրեմիաները:

2—2

Սիրական Տէր-Մարտիրոսեանց

ՓՈՐՁՎԱԾ ՌԻՍՈՒՑԻՆԵՐ

ՊԱՏԱՐԱՍՏՈՒՄ Ե ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

գլխավորների և ընտանեկան դպրոցների համար: Համաձայն է և կրկնութիւններ անել:
Հասցէն կարելի է իմանալ **Մշակի** խմբագրատանը:

2—3

ГОРОДСКАЯ ПРОФЕССИОНАЛЬНАЯ МАСТЕРСКАЯ

ԹԻՖԼԻՍԻ ՓԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Հրաւիրում է մի անձն հաշվապահութիւնն Արհեստանոցում աշակերտ համար:
Յանվարին աշակերտների նոր ընդունելութիւն կը լինի: Արհեստանոցը մանկ
յանկացողներին խնդրում են այժմանից արդէն խնդրել ներկայացնել:
Արհեստանոցը գտնվում է. Կաթողիկոս և Միջի փողոցի անկիւնում, Գաւազդի
տանը:

2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւորի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱՐՈՒՄ, չորեք-
շաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվարից)
սկսած

ԵՒ ՓՈՒԱԳԱՐՁ

Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱՐՈՒՄԻ ՇՈՒԿԵՆԱԻՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 25 դեկտ. (6 յունվարի)	ՄԻՆԳՐԵԼԻԱ	ԺԻՐՈՒՆ
— 8/20 յունվարի	—	—
— 22 յունվարի (3 փետրվ.)	—	—
— 5/17 փետրվարի	—	—

և այլն, երկու շաբթի մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ:
Տօմարների գնորդ ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից
պակեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճին
գիմել ընկերութեան ագենտներին. ԲԱՐՈՒՄԻՍ պ. Գարանիսին, Նաբեհէճայա,
ԹԻՖԼԻՍԻՍ պ. Վիկտոր ԳԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին գնեղալ Տէր-Ասատուրովի
տանը, ԲԱՐՈՒՄ, Սամուէլ Գիլարովին, Կոլոբրակինսկայա հրապարակ և ՆՕՎՕՐՕՍԻՑ-
ՍԿՈՒՄ պ. Լուի Բընօրն:

2—10 (Կ. 2.)

ԱՄԵՆԱԿԱՐԵՐՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ փաճառականական դասակարգին պատկանող
Խմբագրական անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆԱԿԻ առևտրական հաշարարու-
թիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տեղեկություն լրակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 բուր. համար. 10/0-ից մինչև 120/0.
Վաճառվում է եղբայր Ծովաճաճի բանկային գրասենականում և հեղինակի մօտ.
Թիֆլիս, Նագորնայա, № 9. Օտարազարդացի գիմում են վերջին հասցէով Ս. Ս. Մա-
նուէլանու.

Գինն է 1 բուրլի: Փոստի ծախս 21 կ. Գրափաճառների գիշում կը լինի

48—150

ՍԱՐՊԻՆԿԱ ԱՍՎԱԾ ՀԻՒՍՈՒԱԾԻ

„Ա. ԲԵՆԴԵՐ, ՈՐԴԻՆԵՐՈՎ, Ա. ՍՏԵՓԱՆՈՎ ԵՒ Վ. ԲԵՆԴԵՐ“

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԵՐԵՐԻ

Ա. ՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՍԱՐԱՏՈՎԻՑ

Յայտնում է Թիֆլիսի պատուելի հասարակութեանը, որ բաց է անում յա-
տուկ մագաղան սեփական պատրաստութեան սարպինկա ասփած հիւսուածքը,
աղւուխները և բամբակեայ զուգանների զործուածները Թիֆլիսում ծախելու հա-
մար:

Սարպինկա մի հիւսուածք է, որը պատրաստվում է ձեռքի միջոցով և այդ
նիւթից կարող են պատրաստվել կանանց ամենաշքեղ զգեստներ, մանուկների
զգեստներ և տղամարդկանց շապիկներ:

Մագաղանը գտնվում է Թիֆլիսում, Սոլոյակով, Ազաբաբովի տանը, որտեղ
առաջ գտնվում էր Զիթախովի գրասենականը:

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԱՍ ՄԱՍ

18—20

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱՐԱՐՁԱ-

ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ գեկտ. 18-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ա-
ճուրդ (առանց կրկնաճրդի) կապարով տալու Թէլէթի ա. Գէորգայ ուխտատեղում գը-
տնված մի կապակ մի սենեակով: Պայմանաթուղթը կարելի է կարգալ հոգաբարձութեան
ղրւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից 12 ժամին:
3—3 Հոգաբարձու Ա. Մէլիք-Ազարեան

Մամուլի տալիս են և շուտով լոյս կը տեսնեն առանձին հատորով

ԲԱՅՖԻԻ

Վէրդիկեր ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ

(տպված և անտիպ ձեռագիրներից)

Հեղինակի երկասարգութեան պատկերով

Գինը կանխիկ վճարողների համար 3 բուրլի: Լոյս տեսնելուց յետոյ 3 ր. 50 կօպէկ:
Ցանկացողները կարող են գիմել հեղինակի այրիին հետեւել հասցէով՝ Тифлисъ,
Сергѣевская ул., № 20 Анны Радзвиг.

5—5

«ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐԴԻՆԵՐՈՎՆԵՐԻ ՍԱՐՊԻՆԿԱ ԱՐԴԻՆԵՐԻ» ՍԱՐԱՏՈՎԻՍ

ՄԵՋՈՆ 1892 թԻՒ — ՍԱՐՊԻՆԿԱ — ՄԵՋՈՆ 1892 թԻՒ

Ձեռքի հիւսուածք, սեփական պատրաստութեան Պարիզի վերջին մօղային նմուշներին համեմատ

ՆՈՐ — **ՍԱՐՊԻՆԿԱ-ՐԵԼԻՆԵՑ** — ՀԻՒՍՈՒԱԾԻ

Վաճառվում է ամբողջ կտորներով և արշիններով, և ուղարկվում է Ռուսաց
կայսրութեան բոլոր քաղաքները: Նմուշներ շքեղ Սլոբոմում ուղարկվում են 42
կօպէկով, պատային մարկաներով: Գրադրութիւն առաջ լեզուով:
ՀԱՍՏԵՆ. Տարտով—Товариществу Сарпиковъ.

4—10 (Կ. 2.)

ВЫСОЧАЙШЕ

ТОВАРИ-

МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-

УТВЕРЖДЕННОЕ

ЩЕСТВО

ГУННО-ЛИТЕЙНОГО ЗАВОДА

БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и за-
водскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ
мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовыхъ, вальцовыхъ поставовъ
крупосѣевъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лѣсо-
пильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзъ
кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна
Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабелей «Голинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.
Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокурен-
ныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножѣзныхъ дорогъ
Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми ба-
рабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клейтонъ и Шутливортъ въ Линкольнъ
и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь»
Джонстона.

**Единственный складъ вальцовыхъ станковъ
Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.**

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ
пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднatie на эллингъ
судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. **Г. Я. Золотухинъ, Никола-**
евскій пер. д. Арт. Яблокова, противъ Реальнаго учи-
лища кв. № 8.

93—100 (Կ. 2.)